

**III.«2004 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՄԻ ՔԱՆԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ**

1. Վիճակագրությանը վերաբերող իրավական դաշտի բարելավում

Ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի 7-րդ մասով սահմանված պահանջի, Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2004թ. մարտի 24-ի թիվ 03-Ա որոշմամբ հաստատվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը» (տես նաև՝ <http://www.armstat.am/arm/Publications/2004/eramya/ERAMYA.htm>):

Հաշվետվությունն արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքով (ընդունված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 13 մարտի 2001թ., հրապարակված է՝ ՀՀ Պաշտոնական տեղեկագիր թիվ 11 (143), 11.04.2001թ.) սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում ամրագրված դրույթներին համապատասխանեցման նկատառումներից ելնելով, 2004թ. ընթացքում շարունակվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

1.1. «Պետական վիճակագրության մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքների մի շարք դրույթների միջև առկա օրենսդրական հակասությունների վերացման նկատառումներով պայմանավորված՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակվել և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 13.08.2003թ. թիվ 65-Ա որոշմամբ), ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: ՀՀ կառավարության հավանությանն արժանանալուց հետո, օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով և ընդունվել ՀՀ Ազգային ժողովի 2004թ. մայիսի 26-ի նիստում (հրապարակված է ՀՀ Պաշտոնական տեղեկագիր թիվ 34 (333), 30.06.2004թ.):

1.2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվական ներքին ռեգիստրների («համայնքների անձնագրերի») վարման բնագավառում համապատասխան լիազորությունների ամրագրման նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև ի կատարումն ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2141-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 327-ի, ՀՀ ազգային վիճակագրական

ծառայության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հետագայում՝ ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2141-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1415-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության հիշյալ որոշման համապատասխան կետը համարվել է ուժը կորցրած, իսկ օրենքի նախագիծը ներառվել է ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1930-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 198-ում (ժամկետը՝ 2004թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ):

Համայնքների անձնագրերի վարման տնտեսական արդյունավետությունը կարևորվում է նրանով, որ ի թիվս պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի շրջանակում հավաքագրվող տեղեկատվության, վերջինս կարող է օգտակար լինել տվյալ բնագավառի քաղաքականությունը մշակող, իրականացնող և իրականացումը վերահսկող մարմինների համար՝ վերջիններիս ապահովելով բազմաբնույթ և մանրամասնեցված (և հատկապես՝ սկզբնական-անվանական) լրացուցիչ տեղեկատվությամբ:

1.3. Կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակներին համապատասխանեցման, և ըստ այդմ, դասակարգչի սկզբունքների ու մոտեցումների կիրառման միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հաստատվող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և/կամ դրանց կողմից իրականացվող գործունեության տեսակներին առնչվող նախագծերում նշված (թվարկված) գործունեության տեսակները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առաջարկությամբ խմբավորվել են համաձայն Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:

Վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջացման և օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման նկատառումներով պայմանավորված, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ նորմատիվ իրավական ակտերը.

2.1. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ 12-Ն որոշում:

Կարգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 333-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները:

Կարգը սահմանում է լրատվական գործունեություն իրականացնող ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում հավատարմագրման կանոնները և հավատարմագրված լրագրողի՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում գործունեության կազմակերպման հիմնադրույթները՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գործունեության թափանցիկությունը և այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

2.2. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն («Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 13-Ն որոշում:

Որոշման ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր կանոնադրության որոշ դրույթների հստակեցման ու կատարելագործման անհրաժեշտությամբ:

2.3. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն («Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 16-Ն որոշում:

Որոշման ընդունումը պայմանավորված էր հիշատակված որոշման ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում քաղաքացիական ծառայությունը կարգավորող օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, ինչպես նաև կարգի որոշ դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ:

2.4. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004թ. սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշում:

Կարգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 975-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները:

Կարգը սահմանում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում վարչական վարույթի վերաբերյալ գործերի և դրանց հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները:

2. Տարածքային (ռեգիոնալ) վիճակագրության զարգացում

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային (ռեգիոնալ) վիճակագրության արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, մարզային գործակալությունների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ:

ՀՀ ՎՊԽ առանձին որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ստացման նպատակով, վերջիններս նախապես քննարկվել են նաև ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների հետ, որի կապակցությամբ հղվել են շրջաբերական գրություններ: Համապատասխան շրջաբերական գրություններ (այդ թվում նաև՝ մեթոդաբանական պարզաբանումների տեսքով) հղվել են նաև Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի, ինչպես նաև վիճակագրության միջազգային մեթոդաբանությանն առնչվող այլ զարգացումների վերաբերյալ:

Համայնքային մակարդակով, վարչական ռեգիստրների վարման նախադրյալները ստեղծելու նպատակով, լրամշակվել է համայնքի անձնագրի նախագիծն ու դրա լրացման հրահանգը և մարզային գործակալությունների միջոցով ընտրանքային եղանակով փորձարկվել է որոշ համայնքներում՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու ակնկալիքով, որից հետո նախապատրաստվել է համայնքի անձնագրի նախագծի վերջնական տարբերակը և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարին՝ տարածքային զարգացման առաջիկա ծրագրերում, որպես կարևոր հիմնախնդիր, ներառելու նպատակով:

3. Մեթոդաբանական կարողությունների զարգացում,

Նորմատիվ որոշումների գրանցում ՀՀ արդարադատության նախարարությունում

3.1. 2004թ. ընթացքում շարունակվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտ՝ ՀՀ արդարադատության նախարարությունում պետական գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 42 նորմատիվ իրավական ակտեր, որոնցից՝ 37 վիճակագրական դիտարկման փաստաթղթեր ու դրանց լրացման հրահանգներ կամ դրանց փոփոխություններ ու լրացումներ (հավելված 1):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել, որ 2004թ. ընթացքում հաստատված վիճակագրական դիտարկման փաստաթղթերը

համապատասխանեցվել են նաև Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են պետական վիճակագրական մի շարք հաշվետվությունների ներկայացման ժամկետները և պարբերականությունը:

3.2. Հաշվի առնելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի մաս 8-ի, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեզիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, 2004թ ընթացքում ՀՀ վիճակագրության պետական խորհրդի արձանագրային որոշումներով հավանություն է տրվել ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական թվով 34 հաշվետվությունների (հավելված 2), այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 24 հաշվետվություններ (և դրանց լրացման հրահանգներ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 7 հաշվետվություններ, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 2 հաշվետվություններ (և դրանց լրացման հրահանգներ) և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն (և դրա լրացման հրահանգ):

4. Մեթատվյալներ

Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ՝ ՏՏԸՀ (1997թ. դեկտեմբեր) և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ՝ ՏՏՀՍ (1996թ. մարտ): Թվարկվածներից ՏՏԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՍ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՏՏՀՍ-ն պարունակում է դրա մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/>:

Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) անգլերեն լեզվով SSՀՄ-ի տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>: SSՀՄ-ն ներառում է իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածների 21 խումբ ցուցանիշներ: Այդ ցուցանիշների արդիականացումը իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ եռամսյակային կտրվածքով: Տվյալների ադիականացման ժամկետները ներկայացված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող նախնական տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/arc/> :

Անցումը SSՀՄ-ին հնարավորություն է ընձեռում շարունակել վիճակագրության համակարգային զարգացման գործընթացը՝ հետամուտ լինելով ժամանակին, արժանահավատ, ամբողջական և հանրությանը մատչելի տվյալների տարածման սկզբունքի իրագործմանը: